ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Երեմ Վարդանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.24 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երեմ Վարդանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երեմ Վարդանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ քանդակագործ Երեմ Վարդանյանը ծնվել է 1922թ. փետրվարի 14-ին, Երևանում: 1938-1941թթ. սովորել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի գեղանկարչության բաժնում, 1945-1950թթ.՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժնում: 1941-1945թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին: 1949-1956թթ.դասավանդել է Երևանի գեղարվեստի ուսումնարանում, 1961թ.-ից՝ գեղարվեստաթատերական ինստիտուտում: Ստեղծագործել է հաստոցային և մոնումենտալ քանդակագործության ասպարեզներում: Նրա դիմաքանդակներին և մոնումենտալ երկերին բնորոշ է վավերականությունը և կոթողային հնչողությունը: Լավագույն գործերից են՝ «Սպասում: Մայրը» (1967թ., գրանիտ, Դոնի Ռոստովի Սբ. Խաչ եկեղեցու թանգարան), «Ժ.Սրապյան» (1977թ., բրոնզ) դիմաքանդակները, Ղազարոս Աղայանի (1959թ., բրոնզ, Երևանի Ղ.Աղայանի անվան դպրոցի առջև), Նելսոն Ստեփանյանի (1960թ., բրոնզ, բազալտ, Ստեփանակերտ) կիսանդրիները, Հայրենական Մեծ պատերազմում զոհված հոկտեմբերյանցիների հիշատակին նվիրված հուշարձանը (1970թ., ֆելզիտ, ՀՀ Արմավիրի մարզի Հոկտեմբեր գյուղում), Մովսես Խորենացու հուշարձանը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի առջև (1965թ., բազալտ), Գյումրու երկաթուղային կայարանի ճակատի հարթաքանդակները (1978թ., տուֆ, համահեղինակ՝ Սարգիս Յուխանյան): 1945թ.-ից մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: 1972թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչման:

Երեմ Վարդանյանը մահացել է 1985թ. օգոստոսի 19-ին Երևանում:

Հայ քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Երեմ Վարդանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.24 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Երեմ Վարդանյանի որդին՝ հայ քանդակագործ, ՀՀ վաստակավոր նկարիչ Արմենակ Վարդանյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ